

ՎԿԱՅՈՒՄ ԵՆ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԸ

ՍԱՆԴՐՈՒԹՅԱՆ ԲԵՀԱՌՈՒԹՅԱՆ

ԻՆՉՊԵՄ ԵՎ ԵՐԲ ՀԱՍՏԱՏՎԵՑ ԱՊՐԻԼԻ 24-Ը ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿԱՅ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ

1920 թ. մարտի 25-ին Վրթանես Փափազյանը դիմում է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցին և Հայաստանի Հանրապետության խորհրդարանին՝ ապրիլի 24-ը հայտարարելու «Համազգային սուգի օր», իբրև «Յիշարակ հարիւրաւոր հայ մարտորական նահապալկների, որոնք ընկան համաշխարհային մեծ պարերազմի օրերին՝ թիրքական վայրագ սրից»։ Սրան հետևում է կաթողիկոսական դիվանի 26 մարտի 1920 թ. շրջաբերականը, որ հրահանգում է «առաջիկա Զարկի երկուշաբթի մեռելոցին, մարտի 30/ապրիլի 12-ին՝ հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեն ի յիշարակ 1915 թ. ապրիլի 11-ին Կ. Պոլսի և Հայաստանի բոլոր գաւառներում նահապալկուած թիւով մօտ 760 մարտորականների և հոգևորականների»¹։

Հաջորդ տարվա սեպտեմբերի 24-ին Կ. Պոլսի Պարրիարք Զավեն արքեպիսկոպոսը, արտահայտելով «Մեր ազգայինների ցանկությունը», առաջարկում է «յաղագս յաւերժացուցանելոյ զյիշարակ բիւրաւոր նահապալկաց մերոց և զոհից կորստեան համաշխարհային պարերազմին, սահմանելով առ այն յարուկ օր, այն է ի 11/24 ամսեանն ապրիլի»։

Ամենայն Հայոց Վշտալի Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցը ապրիլի 24-ը հռչակում է իբրև «Տօն Ազգային-յիշարակ բիւրաւոր նահապալկաց մերոց համաշխարհային պարերազմին»։

Սպորն աներկայացնում ենք ապրիլի 24-ը Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշարակի օր հռչակելուն վերաբերող հետևյալ երեք փաստաթղթերը։

ԳՐՈՂ ՎՐԹԱՆԵՍ ՓԱՓԱԶՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ՝ ՈՒՂՂՎԱԾ ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ, ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՕՐ ՀՈՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌԻԹԵԱՆ Տ. ԳԵՐՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՎԵՀԱՓԱՌ ՏԷՐ.

Անշուշտ յիշում էք, որ 1915 թիւ, ապրիլ 11-ի գիշերը, Կ. Պոլիս և Հայաստանի բոլոր գաւառներում, նախապէս ծրագրուած դիւային մի մրաժմութիւնով. թիւրք կառավարութիւնը,

¹ ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, 9-217, թ. 3, ձեռագիր, բնագիր։

հայ ազգի բնաջնջմանը իբր ազդարար, խմբովին ձերբակալեց հարիւրատը հայ մարտարկանների, փանջեց նրանց բանարից-բանար և աքսորների ճանապարհներին, յետոյ գազանորէն մորթութիւլ փաւ և անյայտութեան մարկնց նրանց գերեզմաններն անգամ:

Ուվքեր ասես որ չը կային այդ նահապակաների մէջ: Հայ բանաստեղծ ու լրագրող, բժիշկ ու փաստաբան, հայ ուսուցիչ, եպիսկոպոս, վարդապետ ու քահանայ... Ամենքին, ամենքին փարան. ոչինչ չը խնայեցին: Հայ միւրքն ուզեցին մի հարուածով մեռցնել ու ոչնչացնել, ուզեցին ջնջել Հայ գիրքը, Հայ երգն ու Հայ աղօթքը...

Գաղափար կազմելու համար կորուստի ահաւորութեան մասին, բաւական է յիշատակել, որ սպանեցին ու մորթութեցին մօտ 760 մարտարկանների:

Եօթը հարիւր և վաթսուն կեանքեր, որոնք այնքան ոգևորութեամբ մշակում էին հայ միւրքը և որոնց ջնջելով՝ իրաւամբ մրաւծում էին թէ հայ ազգը պիտի կորցնի իր ամենալաւ մասը - իր սիրտը, իր կուլտուրան:

Եօթ հարիւր և վաթսուն նահապականեր, որոնք ընկան մեր ազատութեան արիւնալից ուղիների վրայ՝ պատանդան դառնալով մեր այժմեան փոքրիկ, վրիպ անկախութեան համար, որ պիտի մեծանայ անշուշտ և իր լաւ օրերի մէջ հիացումով պիտի յիշէ իր 760 լաւագոյն մարտար ոյժերին:

Մեր պատմութեան մէջ չենք ունեցել նման նահապականեր, այդպէս խմբովին, սրի զոհ գնացած և վայրագութեան շնորհիւ ոչնչացած: 1915, ապրիլ փասնամէկներ՝ մեր անցեալի արիւնտը էջերը չունին արձանագրած իրենց վրայ: Եօթը հարիւր և վաթսուն լուսաւոր միւրքեր միահամուռ ժողոված և անապատների մէջ մորթութեամբ - լենկթմութեան շրջանում անգամ քեղի չի ունեցել:

Մենք այդ աննախընթաց ստեղծմի օրերը ապրել ենք ահա և նրա կսկիծը դեռ մեր սրտերումն ունինք դառնօրէն: Լայնափարած նախնիների մէջ խորունկ վշտով է, որ մրաբերում ենք 760 նահապակաների անփոխարինելի կորուստը...

Այդ ամէնը, Վեհափառ Տէր, գիտեմ, որ Ձեր հոգու մէջ եւ յարուցանում է կսկծալից յուշեր և մորմոք: Դուք եւ, մեզ՝ հայ գրողներս պէս, զգում էք վշտի խորութիւնը, երբ պահ մի աչքի առաջ էք բերում թէ ուվքեր կորան այդ անիծեալ օրերում և ինչպիսի կեանքեր հնձնեցին:

Դուք եւ անշուշտ կսկիծով համակում էք, երբ ապրիլ 11-ի օրը յիշում էք Զոհրապի, Վարուժանի, Սիամանթօի, Սևակի, Կիւրճեանի - այդ հայ գրողներից յայրենիների դաժան մահը, երբ մրաբերում էք բժ. Տաղաւարեանի, Փաշայեանի, մեր լաւագոյն յեղափոխականներ՝ Վարդգէսի, Մուրադի և այլոց կորուստը, ապա և մեր արժանաւորագոյն կրօնաւորների - Սաափաթեան եպիսկոպոսի, Օրաբալեան, Պսակ, Շաւարշ վարդապետների և այլ շատ-շատերի ոչնչացումը:

Ու մրաբերելով, կսկիծը Ձեր հոգու մէջ անշուշտ Դուք, ես յոյս ունեմ, որ չէք մոռանալ յիշեցնելու բոլոր Հայ եկեղեցիներին ու ամբողջ Հայ ազգին, թէ ինչպիսի կսկծալի սգոյ օր է ապրիլ 11-ի օրը և ինչպէս պիտի այդ օրը դառնայ Հայ Եկեղեցոյ սգոյ փօնեից մեկը այնպէս, ինչպէս դարերից ի վեր դարձել է Ս. Վարդանանց սգոյ փօնը:

Թոյլ փութք ինձ ուրեմն, Վեհափառ Տէր, խոնարհաբար անել Ձեզ հեքնեալ առաջարկները՝ քաջ գիտեմալով, որ Դուք նրանց պիտի քաջալերէք ըստ ամենայնի և պատիւիդէ իրազործելու վաղօրօք:

1) Պարվեր ուղարկել բոլոր Հայ եկեղեցիներին՝ սգոյ փօն և օր հռչակելու ապրիլի 11-ի օրը; և հերևապէս հանդիսաւոր հոգեհանգիստներ կատարել ամէն փեղ:

2) Մտցնել մեր Տօնացոյցի մէջ իբր մշտական սգոյ փօնի օր՝ ապրիլ 11-ի օրը - «Յիշատակ 760 հայ նահապաղ մարտորականների, որոնք ընկան համաշխարհային մեծ պարերազմի օրերին՝ թրքական վայրագ սրից»:

Մեծայոյս լինելով որ Ձերդ Վեհափառութիւնը կատարելապէս իր սրտին և զգացմունքներին համապատասխան գտնելով իմ այդ առաջարկները՝ կանի իր պարշաճ փնօրինութիւնները վաղօրոք - ևս այսօր իսկ նման մի դիմումն ուղարկում եմ Հայաստանի Պարլամենտին և հանրային կրթութեան ու արուեստի պ. մինիստրին:

Ամենայն յարգանքով՝ Հայ գրող

ՎՐԹԱՆԷՍ ՓԱՓԱԶԵԱՆ

Յ. Գ. Ապրիլ 11-ը այս փարի ընկնում է Զարկական օրը: Ինձ թոււմ է, որ յարմար կը լինէր փօնել 12-ին, որ արդէն «յիշատակ մնեւոց»-ի օրն է:

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 5, գ. 217, թ. 1-2, ձեռագիր, բնագիր:

**ՄԱՅՐ ԱԹՈՒԻ ԴԻՎԱՆԱԳԵՏ ԿՈՐՅՈՒՆ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԾԱՆՈՒՅՈՒՄԸ
ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄՈՒՐԱԴԵԲԵԿՅԱՆԻՆ**

ԴԻԻԱՆ

ՎԵՆԱՓԱՌ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՆԱՅՈՑ

Թ. 435

8 ՆՈՅԵՄԲԵՐ 1921 ԱՄԻ

Ի Ս. ԷԶՄԻԱՇԻՆ

ԵՐԵՎԱՆԻ ՆԱՅՈՑ ԱՌԱՋՆՈՐԴ

ԳԵՐԱՇՆՈՐՇ Տ. ԽՈՐԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻՆ

Նորին Ս. Օծուրթին ազգիս Վեհափառ Հայրապետը, ըստ խնդրանաց Կ. Պօլսոյ Ամենապարի Պարրիարքի, փարոյս սեպտեմբեր 4 թ. 63 գրութեամբ յանուն Նորին Վեհափառութեան, բարեհաճեց Հայրապետական Կոնդակաւ հոկտեմբեր 30 թ. 416 յարգել վերջին համաշխարհային պարերազմի ընթացքում հայկական փարագրութեան, կոտորածի գոհերի և բիրաւոր նահապաղների յիշարակը, սահմանելով առ այն յարուկ օր ապրիլ ամսի 11/24-ը համապատասխան մեր արևմտահայ ժողովրդեան բոլոր փափագին:

Նոյն օրը ապրիլ 11/24 կոչուելու է «Տօն Ազգային-յիշարակ բիրաւոր Նահապակաց մերոց համաշխարհային պատերազմին»: Նոյն օրը Հայաստանեայց բոլոր եկեղեցիներում պէտք է մարտուցուն հանդիսաւոր Պարարագ և կարարուն հոգեհանգիստ:

Հայրապետական Դիւան Նորին Սրբութեան պարունէրի համաձայն յայտնելով Ձերդ Գերագանցութեան, յանձնարարում է շրջաբերականաւ ծանուցանել թեմիդ եկեղեցական պաշտօնէութեան և հայ ժողովրդին ի գիտութիւն:

Դիւանապետ՝

Կորին Եպիսկոպոս

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 3, գ. 329, թ. 1, ձեռագիր, բնագիր:

ԳԵՎՈՐԳ Ե ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՊՐԻԼԻ 24-Ը ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՈՆԻ ՆԱՀԱՍԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐ ՀՈ-ՉԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԷՈՐԳ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՄԻ ԲՐԻՍՏՈՍԻ...

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ ՊԱՏՐԻԱՐԺԻ ՀԱՅՈՑ Կ. ՊՈԼՍՈՑ Տ. ԶԱԲԷՆ ԱՐՔԵՂԻՄԿՈՊՈՍԻ,

ՀԱՐԱՋԱՑ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՈՈՅՄ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Զգիր Ամենապարտութեան Ձերոյ արձակեալն ի 24 ամսեանն սեպտեմբեր վարդոյս ընդ համարաւ 63. ընկալաք և ընթերցեալ հասու եղաք փառագանաց Ազգայնոց մերոց սիրելեաց, յաղագս յաւերժացուցանելոյ գլխարակ բիրաւոր Նահապակաց մերոց և գոհից կորստեան համաշխարհային պատերազմին, սահմանելով առ այն յարուկ օր, այն է ի 11/24 ամսեանն ապրիլի:

Մեծաւ գոհունակութեամբ և մխիթարութեամբ վշտացեալ սրտի Մերոյ և հոգւոյ ընկալեալ զայդ առաջարկ Ձեր ընդ միահամուռ ցանկութեան սիրեցելոցդ առ ի Մէնջ հարազարից կողմանցդ, արժանի յաւերժական յիշարակաց համարելով զնահապակս զորոց է խնդիրն, Մեք սովին Հայրապետական Կոնդակաւ հաստատեմք զրօն 11/24 ամսեանն ապրիլի անուանելով զօրն «Տօն Ազգային-յիշարակ բիրաւոր նահապակաց մերոց համաշխարհային պատերազմին»:

Օրինելով հանդերձ գլխարակ Նահապակացն վճարելոյ զկեանս ի սէր ազգի, Եկեղեցւոյ սրբոյ և ժողովրդեան սրով, հրով և զանազան դառն պանջանօք, պարունէր Հայրապետական տամբ կարգադրել հրապարակել զայս կարգադրութենէ Մերմէ ամենուրեք, տալով

տպագրել նաև յօրացոյցս ի մշտնջենական յիշատակ ապագայի, որպէս և Մեք պատուիրեցաք տպագրել յետ այսու յէջս օրացոյցի Մայր Աթոռոյ Ս. Էջմիածնի:

Ողջ իրութք զօրացնալ ի շնորհս Ամենասուրբ Հոգոյ Աստուծոյ: Ամէն:

Վշտայի Գէորգ Ե
Կաթողիկոս Ամենայն Հայոց

յ30 հոկտեմբեր 1921 թ.

Թ. 416

ՀՀ ՊԿՊԱ, ֆ. 57, ց. 329, թ. 2, ձեռագիր, բնագիր: